ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 001

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԱՔԱՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1258 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Արաքասյա Խաչատրյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.1258 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-037-0123-0002, գործառնական նշանակությունը՝ անջրդի վարելահող) գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 002

ԱԼԻԿ ՄԱՐԱՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասինե 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով Ալիկ Մարատի Հակոբյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը որոշում է.

1.Ճանաչել Ալիկ Մարատի Հակոբյանի (ծվնած 05/10/1955թ) սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրի 1-ին փողոց, թիվ 12 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:

2.Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը.

3.Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 003

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ՝ ԺԱՌԱՆԳՈՐԴ ԱԼԻԿ ՄԱՐԱՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.00747 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն,26.12.2002թ.) 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

1. Ճանաչել Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչ՝ ժառանգորդ Ալիկ Մարատի Հակոբյանի՝ ծնված 1955թ., սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրում գտնվող, փաստացի օգտագործվող 0.00747 հա գյուղատնտեսական նշանակության խաղողի այգու նկատմամբ:

2. Ալիկ Մարատի Հակոբյանի կողմից ավել օգտագործվող 0.00747 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 004

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀայաստանիՀանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 14.02.2018 թ.-ի թիվ 19 որոշման, 2-րդհավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետի, 15.12.2017 թ.-ի թիվ 55-Ն որոշման պահանջները, Արենի համայնքի «Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման» հանձնաժողովի 13.01.2020թ . թիվ 1 որոշումը, <<Արենի համայնքի տարածքում ապօրինի ծառահատումները կանխարգելելու և սանիտարական էտը կանոնակարգելու նպատակով ստեղծված հանձնաժողովի <<24.12.2019թ-ի թիվ 8 և 25.12.2019թ-ի թիվ 9 արձանագրությունները՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է.*

1.Թույլատրել Արենի համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ Երվանդ Ահարոնի Մաթևոսյանին, Զոհրաբ Հմայակի Մաթևոսյանին, Արմեն Ռուբենի Վարդանյանին Աղավնաձոր բնակավայրի մարզադաշտի հարակից տարածքից կատարել կիսաչոր և չոր բարդիների հատում՝ յուրաքանչյուրը ոչ ավել 3 խմ-ից:

2.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը և հսկողությունը դնել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արամ Աթանեսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 005

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԿՈՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասինե ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի, 34-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 42-րդ հոդվածի, առաջին մասի 8-րդ կետերի, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի, ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի առաջին մասի Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի վերջին պարբերության պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշումը և Արենի համայնքում <<Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման և կասեցման կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովի>> 13 հունվարի 2020 թվականի թիվ 1 նիստի թիվ 1 արձանագրությունը՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է.*

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչ Արթուր Մարկոսի Մկրտչյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Արենի համայնքի տարածքում <<Վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու>> մշտական հանձնաժողովին՝ (նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Եսայան) քաղաքացի Արթուր Մարկոսի Մկրտչյանին վարչական վարույթի գործի քննության համար սույն թվականի հունվարի 27-ին ժամը 12:00-ին հրավիրել Արենիի համայնքապետարան:
3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել քաղաքացի Արթուր Մարկոսի Մկրտչյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 006

ԱԼԻԿ ՄԱՐԱՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասինե 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով Ալիկ Մարատի Հակոբյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը որոշում է.

1.Ճանաչել Ալիկ Մարատի Հակոբյանի (ծվնած 05/10/1955թ) սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրի 1-ին փողոց, թիվ 13 հասցեում գտնվող օժանդակ կառույցի նկատմամբ:

2.Օժանդակ կառույցը կառուցվել է մինչև 2001 թվականը.

3.Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 007

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՇԱՎԻՐ ԱՇՈՏԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.15 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ կետի, «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով հողի սեփականատեր Արշավիր Աշոտի Մարտիրոսյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչ Արշավիր Աշոտի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.15 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը (ծածկագիրը՝ 10-008-0184-0007, վկայականի համարը՝ 20052019-10-0012, տրված՝ 20.05.2019 թ.), ձկնաբուծարան կառուցելու համար հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել ջրային նշանակության օբյեկտների հողեր, գործառական նշանակությունը՝ ձկնատնտեսային:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**